

Тифлисъ. Редакція «Мшакъ»

Յայտարարութիւնների համար զնարում են
 իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

(Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի)

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԽԸՆԿՆԻ

հարկել, այդ բոլորը չէր կարող կատարվել
ուղեթևամբ կամ խաղաղական ճանապարհով:
Պոլսի պատրիարքարանը և ազգային ժողովը
քեզ երկար կռւէին վաղեմի աւանդական
թեան հետ, մինչև կարողանային թիւրքերայի
հոգևոր իշխանութիւնների իրաւունքները
և սահմանի մէջ դնել, խիստ երկար կը լի-
նարագրուէր այն բոլոր կիւրճների մասնաճա-
նիւնները, որ տեղի ունեցան սահմանադրու-
թէ հիմնեցող առաջ և թէ յետոյ: Այս-
միայն կասեցը, երբ է. Պոլսում հաստատ-
ւե մը կանոնաւոր հոգևոր սահմանադրական
աւարտութիւն, այնուհետև Ստի և Աղթամարի
ողրիկոսութիւնները իրանց նշանակութեամբ
չէին տարբերուում մի հասարակ թեմական
ջնորդութիւնից: Երանց իրաւունքները չէին
սահմանու իրանց միմեանց արանքներէն:

Երբ սկսվեցան վիճարանութիւնները ձայնաւոր Զուբայով մի քանի հարցեր առաջարկեց վերաքննող յանձնաժողովին, որի պատասխաններէն մէկը այն եզրակացութեան հասանք, որ վերաքննութիւնը շատ խստութեամբ չէ կատարվել: Վարչութիւնը և քաղաքապետը նոյն ձայնաւոր Զուբայովի հարցերին պատասխանեցին, որ մի քանի անկանոնութիւններ կատարվել են, որովհետեւ տեղեւորներ, գեղեցիկներ և յունկար ամիսներին վարչութիւնը չափազանց շատ գործ է ունենում, որ առանց ստորագրութեան փողեր են տուած ծառայողներին՝ զրանց և վարչութեան փոխադարձ հաւատարմութեան հիման վրա և որ կապալառուներին փող էր տրվում, որովհետեւ նրանք մեծ կարողութեան տէր մարդիկ չեն և նրանց տրվում էր կատարած գործի համեմատ արժէքի կէսից ոչ աւելի:

Այնուհետեւ նոյնպիսի հարցերով դիմեց յանձնաժողովին և վարչութեան անդամներին ձայնաւոր Աբգար Յովհաննիսեանը և վիճարանութիւնները սկսվեցան: Խօսում էին զլիստորակէս ձայնաւորներ՝ Աբգար Յովհաննիսեան, Լիւմիւրով, բժիշկ Բոտինեանց մի կողմից, որոնք առանձին զեղծութիւններ չէին գտնում վարչութեան վարմունքի մէջ և նրան պաշտպանում էին, իսկ ձայնաւորներ Զուբայով, Յւսէպով և Ալիսանով միւս կողմից: Վիճարանական Զուբայով շատ յարձակում էր վարչութեան վրա և նրա կողմից գործած այնպիսի չարիքներ էր գրանուում, որոնց պատճառով վարչութիւնը պէտք էր դատարանի ենթարկել: Վիճարանութիւնները վերջացան և ձայնաւորների ահագին մեծամասնութիւնը վճռեց անցնել օրակարգի հարցերին և դրանով հաւատարմութիւն յայտնեց քաղաքապետին և վարչութեան անդամներին: Մեր կողմից զանազան դատողութիւններ անելու նպատակ չունենք, այսքանը միայն կը նկատենք, որ ձայնաւոր Ելիսիւրով պ. Զուբայովի ասածների մասին մի քանի անգամ կրկնում էր. «Я это слышал» (յա անմտութիւն է): Խօսելու այդպիսի եղանակը առհասարակ ժողովներին մէջ անբարեբաղակ է, եթէ աւելի չտեսնենք, մանաւանդ, եթէ ի նկատի առնենք, որ այդ անմտութիւններ ասող ձայնաւոր Զուբայովի առաջարկութեան շնորհիւ յայտնվեցաւ, որ ապօրինի կերպով առաջուց տուած է 18,000 ռ. աւելի գումար և այդ պատճառով քաղաքը կորցնում է առ-

նուազը այդ գումարի տոկոսը, որ 6% ամսական 90 ռ. է անում, որ, յայտնի չէ թէ ինչի համար, մտաւորապէս 100 ռ. ամսական առաջուց 700 ռ. և այլն:

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Յունվարի 31

Ներկայ ծրարի մէջ ուղարկելով երեսուն և հինգ բուրլի, որ ժողովել եմ յօդուտ Կ. Պօլսի հայոց Միացեալ ընկերութեան, խոնարհաբար խնդրում եմ հասցնել ուր հարկն է: Այդ գումարից 27 ռ. հանգանակել եմ պ. Մարտիրոս Տէր-Ստեփանեանի տանը, որ մի քանի անձինք հաւաքված էինք երեկոյան հացկերութիւն: Իսկ ուրիշ բաներից ցուցակը խնդրում եմ տպել «Մշակ» համարներից մէկի մէջ ի միամտութիւն:

Մարտիրոս Տէր-Ստեփանեան 3 ռ., Նիկօլայ Տէր-Ստեփանեան 10 ռ., Ստեփան Տէր-Ստեփանեան 1 ռ., Աղասի և Սէրգէյ Պոպովսկաններ 4 ռ., Ալ. Աբելեան 1 ռ., Կարապետ Մարգարեան 1 ռ., Խաչատուր Սահակեան 1 ռ., Աւագ Ղատարեան 1 ռ., Յովհաննէս Տէր-Ղազարեան 1 ռ., Աւետիս Տէրտէրեան 1 ռ., Ստեփան Բաբայեան 1 ռ., Աղաջան ձաղերեան 1 ռ., Ոմէ 1 ռ., Ալ. Զատ ոմն 2 ռ., Սմբատ Բուրազեանց 3 ռ., Սահակ Աղաման 1 ռ., Աղաբեգ Խաչանեան 1 ռ., Մկրտիչ Շամշեան 1 ռ., Ա. Մովսէսեան 1 ռ.: Գումարն է 36 բուրլի, իսկ 1 բուրլի փոստի ծախս դուրս գալով կը մնայ 35 ռ.: Ստորագրութիւնը չարունակում եմ:

Ա. Մովսէսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ալեքսանդրապոլ, 31 յունվարի

Պատուական լրագրող Ներկայ թուականի 9 համարում յայտնած էր մի անպայտ պարոն Իրլս, որ ես իւրաքանչիւր հասարակ նամակի համար պահանջում եմ 5 կոպ., իսկ զրամաւոր նամակների յայտարարութեան համար 15 կ. այդ իմ անիրաւացի պահանջը չը կատարողի նամակը իբր թէ ես չեմ յանձնում իրան: Ես երբեք այդպիսի խցճի և օրինաց հակառակ պահանջ ոչ ոքից չեմ արած: Եթէ պարոն լրագրողը հաղորդած լուրը ճշմարիտ է, թող յայտնէ հրապարակաւ իր անունն ու ազգանունը և ունից արած եմ այդ պահանջը, այն ինչ հակառակ լրագրող պարոնի զրպարտութեանը, ունեմ մի քանի ջնորհալուծութեան թերթի պատուաւոր անձինքներից ստացած: Եթէ հարկ լինի այդ ես հրապարակ կը հանեմ ի ստուգութիւն իմ մարդու և հաւատարմի ծառայութեան, իսկ եթէ պատահած լինէր ինձ հետ այդպիսի դէպք, կարծում եմ, որ չէի կարող արժանանալ այդ ջնորհալուծութեանցը: Վասն որոյ, ողորմած տէր, ճշմարտութիւնը վերականգնելու

պատրիարքին սահմանադրական կառավարութիւնը, երբեք թոյլ չէին տալ, որ հաստատվէր նա: Իսկ այժմ ոչ միայն խիստ ուշ էր, այլ անկարելի էր խելէ այն, ինչ որ տուած էր առաջուց, — անկարելի, քանի որ Հայաստանի համար նոր արտօնութիւններ, նոր բարենորոգումներ էին պահանջում: Բայց Բ. Գուռը բաւական վարպետ է իր խորամանկութիւնների մէջ. նա մտածեց, եթէ ուղղակի կերպով չէ կարող ոչինչ չափել պատրիարքի իշխանութիւնը, գոնէ կողմէ նախի միջոցներով պէտք է թուլացնել նրան և միանգամայն անդամաւորեմ, որ այլ ես չը կարողանայ թիւրքաց չար նպատակների հակառակ գործել: Այստեղից ծագեց Կիլիկիայի կաթողիկոսական խնդիրը:

Որպէս կրօնական և եկեղեցական վէճերը սկզբում ծագում են չնչին հարցերից, այնպէս էլ Կիլիկիայի Մկրտիչ կաթողիկոսի վէճը Կ. Պօլսի պատրիարքարանի հետ ըստ երևոյթի պէտք է շատ չնչին համարել, եթէ նրա կեղծի տակ չը նկատվէր թիւրքաց կառավարութեան քաղաքական ներդաւոր նպատակը: Այս ինչպէս. — Մկրտիչ կաթողիկոսը, օգուտ քաղելով Բ. Գրան պաթեան թշնամական յարաբերութիւնից դէպի պատրիարքարանը, աշխատում է, որքան կարելի է, դուրս գալ պատրիարքի և աղայի ժողովի իրաւաստութեան տակից, աշխատում է բարձրացնել իր դիրքը, և եթէ հնարաւոր կը լինի, մի անկախ գրութիւն ստեղծել: Նա պահանջում է,

համար խնդրում եմ իմ այս երկտող պատասխանը տպել ձեր լրագրի մօտակայ համարներից մէկում:

Ալեքսանդրապոլի փոստատան նամակ բաժանող Յովհաննէս Բաբաջանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՒԽՈՒՅ մեզ գրում են որ անցեալ գեղեցիկ ամիսի 15-ից սկսած մինչև այս տարվայ յունվարի 20, ուրեմն երեսուն և հինգ օրվայ ընթացքում, 25 անգամ հրդեհներ պատահեցան Նուխու մէջ: Երբեմն մի և նոյն գիշերը երկու տեղ էր պատահում հրդեհը: Երբեմն անգամ հրդեհների ժամանակն էլ այրվեցան չորս մարդ, որոնցից երկուսը խելոյն մնաւ, իսկ միւս երկուսն էլ մահամեծ գրութեան մէջ հիւանդ պառկած են:

ՆՈՒԽՈՒՅ մեզ հաղորդում են հետեւեալը: «Թեմական վերատեսուչը երեք ամիս շարունակ մնալով մեր գաւառում, ոչ մի բարեկարգութիւն չէ արել զպրոցների մէջ, ընդհակառակն, բոլոր ուսումնարանները կործանված գրութեան մէջ թողնելուց յետոյ, ինքն հեռացաւ Բագու: Առանց վերանայի, լաւ թէ վատ, զպրոցները զոյուցիւր ունէին մեղաւոր, իսկ զրա օրով ոչ միայն չը բարեկարգվեցան նրանք, այլ բոլորն էլ փակվեցան: Այժմ հարկաւոր մանուկներ անգործ թափառում են փողոցներում գրկված լինելով զպրոցից, միմիայն փողոցային յիշոցները սովորելով:»

Յունվարի 24-ից սկսած, ինչպէս մեզ գրում են, եղանակը Նուխու կողմերում մեղմացել է: Զիւնի փոխանակ կանոնաւոր անձրեւներ են գալիս և նրանց հետեւում են պայծառ և տաք օրեր: Յորենի դիւր իջաւ մինչև 4 ռ. 50 կ. չանաղը (3 պուլ և 20 Ֆ.), զարին և բրինձը նոյնպէս սովորականից անհամեմատ է ժան գինով են ծախվում, իսկ մնացած մթերքները թանկ են:

ԱՍԽԱՅԻՍՏՈՅ մեզ գրում են: «Այս քաղաքում կան վեց ուսումնարաններ, որոնցից հինգը հայոց զպրոցներն են, իսկ վեցերորդը քաղաքային ուսումնարանն է, ուր աշակերտների մեծ մասը դարձեալ հայեր են: Բայց այդ վերջին զպրոցում հայոց մայրենի լեզուն շատ թոյլ կերպով է մատակարարվում: Այդ լեզուի ուսուցիչը մի բոլորովին անուս մարդ է: Բաղաձն էլ չէ կամենում աւելի փող ծախել հայոց լեզուի մի օրինակուր ուսուցիչ իր քաղաքային զպրոցի համար վարձելու նպատակով, չը նայելով որ, ինչպէս ասացինք, սաների մեծ մասը դարձեալ նոյն իսկ հայերն, ուրեմն քաղաքի մէջ մեծամասնութիւն կազմող բնակիչները դաւաններն են:»

Մի պարոն, որ բնակվում է Թիֆլիսի Հաւա-

նի իր վիճակի սահմանները լայնացնեն, պահանջում է, որ իրան իրաւունք տան, առանց պատրիարքարանի միջնորդութեան, ուղղակի յարաբերութիւններ սկսել Բ. Գրան հետ: — Այդ բոլորը Բ. Գրան ամենացանկալի բարձրանքներն են: Նպատակը շատ պարզ է. եթէ Կիլիկիայի կաթողիկոսութիւնը կը բարձրանայ, եթէ նրա յարաբերութիւնները բոլորովին կը կտրվեն պատրիարքարանից, այն ժամանակ, շատ հասկանալի է, որ թէ աղային ժողովը և թէ պատրիարքի իշխանութիւնը կը թուլանայ: Եւ Բ. Գուռը այնուհետեւ իր փառասիրութեան համար ամեն աղային շահերը ծախող մի դաւաճան կաթողիկոսի հետ ինչպէս կամենայ, այնպէս կը վարվի:

Բ. Գուռը բաւական վարպետութեամբ է առաջ տանում իր գործը: Նա գիտէ, որ մի կաթողիկոս եկեղեցական տաճարում աւելի բարձր է քան թէ մի պատրիարք: Ինչու պատրիարքից չը խել նրա բոլոր իրաւունքները և չը տալ կաթողիկոսին, երբ որ այդ կաթողիկոսը խոստանում էր աւելի հուր հպատակ դառնալ Գրանը: Այդ հարցում Բ. Գուռը ի նկատի ունի մի ուրիշ, աւելի կարեւոր կէտ եւ: Նա գիտէ, որ Սիւր, Զէյթունը և առհասարակ Կիլիկիան, իրանց քաղ հայ լեռնաբնակներով մեծ նշանակութիւն ունեն շայտաւորների վերականգնման գործում: Հիմնելով այդ երկրներում մի անկախ կաթողիկոսութիւն, և կարելով նրա յարաբերութիւն-

բար ասված թաղում, մեզ գրում է: «Զեր լրագրի № 19-ի մէջ հաղորդած լուրը վրաց քահանայի արարմունքի մասին շատ անախորժ տպաւորութիւն գործեց կարգացողի վրա: Մենք կարող ենք ասել որ հայ քահանաների մէջ էլ շատ անգամ պատահում է տեսնել այդ տեսակ սակարկութիւնների օրինակները: Նորեւումս մենք առիթ ունեցանք ներկայ գտնվել մի հաւաքարցի հայ քահանայի սակարկութեանը նորապատկերի հետ: Այդ տեսակ արարմունքներից յետոյ զժուար է պահանջել ժողովրդից յարգանք դէպի քահանաները, որովհետեւ տգէտ ժողովուրդը, թէև դա շատ ցաւալի է, միշտ սովորութիւն ունի մասնաւորը ընդհանրացնել:»

ՂԱՐՍԻՑ մեզ գրում են: «Յունվարի 25-ին տեղիս ուս թատրոնաւորները տուեցին մի ներկայացումն յօդուտ հայոց հոգեւոր երկսեռ զբարոյների: Որքան ինքն գործը բարի էր աշխուռուս խմբի կողմից, դրա մասին մենք չենք էլ կամենում աւելորդաբանութիւններ անել: Գործը ինքն իր համար է փատարանում: Բայց մենք կը պատմենք միայն անցքերը, առանց մեղանից որ և է խօսք կամ դատողութիւն աւելացնելու: Խօսքը մեծ զժուարութիւնների և անախորժութիւնների հանդիպեց, նոյն իսկ ուս հասարակութեան միւս մասից: Ամբողջ ուս հասարակութիւնը երկու որոշ բանակների վրա բաժանվեց: Հասարակութեան մի մասը ասում էր որ հայերին չը պէտք է օգնել, նրանք անպիտան են, Ֆանատիկներ են, հարստահարողներ են, իսկ միւս մասը և նրա հետ թատրոնաւորները պատասխանում էին որ հայոց զպրոցներն էլ տեղութիւնից հաստատված զպրոցներն են, որ տեղ ուսում են առնում ուս հպատակ, ուս քաղաքացի հայ մանուկները: Վերջապէս թատրոնաւորները թէ ներկայացման յղանալու ժամանակ, թէ կրկնութիւններ աշխուռ ժամանակ, թէ կրկնութիւններ աշխուռ ժամանակ և թէ նոյն իսկ ներկայացման ընթացքում այնպիսի անախորժութիւններ, պատկեր դիպչող վերադարձների, կուրսերի և աղմուկների հանդիպեցան, որ հայոց զպրոցների վարչութիւնը վճռեց և ներկայացուց մից գոյացած գումարը ստանալուն պէս չորսհաւաքութեամբ յետ դարձնել ուս թատրոնաւորներին:»

ԲԱԳՈՒԻՑ պ. Յ. Մ. Մարգարեանի ձեռքով ստացանք 10 բուրլ յօդուտ «Միացեալ ընկերութեան», որ նուիրել է Միքայէլ Տէր-Յովհաննէս անանց:

Ստացանք ԲԱԳՈՒԻՑ պ. Բարութիւն Հայրու-մեանցից 20 բուրլ յօդուտ Վանի սովատանջներին:

Ռուսաց լրագրողները հաղորդում են որպէս լուր, որ գաւառական լրագրութիւնը ազատված

ները Կ. Պօլսի պատրիարքարանից, — դրանով Բ. Գուռը բոլորովին իր ճանկերի մէջ զցած կը լինի Կիլիկիան: Մկրտիչ կաթողիկոսի նման աղաքաւածաւ, և թուրք կառավարութիւնից պաշտպանութիւն վայելող մարդը, ի հարկէ, երբեք չի սկսի նրա շահերի հակառակ գործել: Մինչդեռ Կ. Պօլսի պատրիարքարանի գործողութիւնները Կիլիկիայի վերաբերութեամբ չեն կարող շատ անտեղի կասկածներ չը պատճառել Գրանը: Մկրտիչ կաթողիկոսը, առանց պատրիարքարանի հրաւերի, Կ. Պօլս գալով, արդէն բոլորովին է իր մեքենայութիւնները: Երբ քաղմամայ զիգած ոսկիներով (որոնց մասին մի քանի անգամ պատմվել է նա) այժմ սկսել է մի առանձին կուսակցութիւն կազմել: Նա շարունակում է յամառութեամբ մերժել պատրիարքի և աղային ժողովի առաջարկութիւնները: Թիւրքաց մամուլը բացարձակ յայտնեց իր պաշտպանութիւնը պատուաւր կաթողիկոսին, հրաւիրելով Բ. Գրան ուղադարձել վերաբերութեանը այդ վէճի վրա: Հայ մամուլը դեռ վճռական ոչինչ չէ ասել: Կուրք շարունակվում է:

Տարակոյս չը կայ, որ այդ կուրք կարող է երկար զբաղեցնել թէ պատրիարքին և թէ աղային ժողովին մի անախորժ, մի և նոյն ժամանակ վտանգաւոր եկեղեցական հարցով, ուղիղ իր քան թէ մի պատրիարքի և մի աղայի միջև ընկած ժամանակ, երբ պատրիարքի իրաւասիւսը բոլորն այժմ շատ թանկ է մեր բուն աղային խնդիրների վերաբերութեամբ: Կնթարքներ, թէ

VICHY

управление :

PARIS, 22, boulevard Montmartre.
GRANDE-GRILLE. От лимфатичес-
кого расположения, дурного пищеварения,
засорения печени и почек, завала, ка-
менной болизы и проч.

HOPITAL. От трудного пищеварения,
тяжести желудка, потери аппетита, боли
въ желудкѣ.

CELESTINS. От боли въ поясницѣ,
мочевого пузыря, каменной болизы, по-
дагры, потери аппетита.

HAUTERIVE. От боли въ поясницѣ,
мочевого пузыря, каменной болизы, по-
дагры, потери аппетита.

ТРЕБОВАТЬ название источника
на коробкѣ.

Въ аптекахъ и магазинахъ